ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՎԵՊՈՒՄ

Զ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Վերջին տասը-տասնհինգ տարում, մասնավորապես ՍՄԿՊ XX համագումարից հետո, ինչպես ամբողջ սովետական, այնպես էլ սովետահայ գրականությունը վերելքի շրջան ապրեց։ Դրա ապացույցներից մեկն էլ նոր թեմատիկայով մի շարք վեպերի հրապարակ գալն էր։ Ծավալուն երկերի նյութ դարձան հայ ժողովրդի ռեոլյուցիոն գարթոնքը, ժամանակակից սովետական իրականությունն իր տարբեր կողմերով, սփյուռքահայության կյանքը։ Շատ վեպեր գրվեցին նաև Սովետական Միության հայրենական մեծ պատերազմի մասին։ Քանի դեռ պատերազմը չէր վերջացել, սովետական գրողները, բնականաբար, հնարավորություն չունեին լայն կտավի գիմելու։ Այն ժամանակ զարգացավ ակնարկի ժանրը։ Բայց դեռ պատերազմի ժամանակ միութենական գրականության մեջ հրապարակ եկան նաև վիպակներ։ Դրանց մեջ նշանակալից էր, օրինակ, Ալ. Բեկի «Վոլոկալամսկի խճուղին»։ Դեռ նոր էին լռել թնդանոթները, երբ սովետական գրականության մեջ երևացին նաև հայրենական պատերազմին նվիրված ծավալուն կտավներ՝ Մ. Բուբեննովի «Սպիտակ կեչին», Ա. Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա», Օ. Դոնչարի «Դրոշակակիրներ», Բ. Պոլևոյի «Պատմվածք իսկական մարդու մասին» և մի քանի այլ վեպեր, որոնք նոր էջ բացեցին սովետական վեպի պատմության մեջ։ Մ. Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար» վեպի հատվածները ցույց են տալիս, որ այն սկսված է վեպ-էպոպեի՝ մոնումենտալ ստեղծագործության պլանով։

Այդպիսի պատկեր նկատվեց նաև սովետահայ գրականության մեջ։ Պատերազմի սկզբից շատ հայ գրողներ գտնվում էին ռազմաճակատում և թե՛ բանակային թերթերում, թե՛ թիկունքի պարբերականներում գրում էին հայրենասիրությամբ տոգորված ակնարկներ, փառաբանում սովետական ռազմիկների հերոսությունը։ Ականատեսի գրչով, ռազմաճակատային իրադարձությունների թարմ տպավորություններով Հր. Քոչարը գրեց իր ակնարկները, որոնց մեջ ցույց էր տալիս ժողովուրդների եղբայրությունը և դրա դերը պատերազմում հաղթանակը կոփելու համար, վեր էր հանում սովետական մարտիկների քաջակորով բնավորությունները։ Քոչարի «Սրբազան ուխտ» ակնարկների ժողովածուն լուրջ ավանդ հանդիսացավ հայրենական պատերազմին նվիրված սովետահայ արձակի մեջ։ Լավ ընդունելություն գտավ Հմ. Սիրասի «Հայր և որդի» պատմվածքների ժողովածուն։ Ակնարկներով ու պատմվածքներով հանդես եկան շատ ուրիշ գրողներ ու լրագրողներ։

Կյանքի առաջադրած պահանջի հետ միասին հայրենական պատերազմի մասին վեպերի ստեղծմանը մեծապես օգնեցին դեռևս պատերազմի ժամանակ լույս տեսած՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը։ Թեև նրանք վերաբերում էին հայ ժողովրդի հեռու

անցյալի ազատագրական կռիվներին, բայց իրենց գաղափարական հնչեղությամբ, պատմության մեջ ժողովրդի ղերի իրենց խորը փիլիսոփայությամբ այժմեական էին. գտնվում էին արվեստի այնպիսի մակարդակի վրա, որ հայրենական պատերազմի մասին ծավալուն արձակի համար ամուր հիմք ստեղծեցին։

Պատերազմն ավարտվելուց անմիջապես հետո սովետահայ գրականության մեջ երևան եկան մի շարք վեպեր ու վիպակներ։ 1946—49 թթ. լույս տեսան Քր. Թափալցյանի «Պատերազմ» վեպի առաջին ու երկրորդ հատորները, 1950 թ. Սերո Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ», Հմ. Սիրասի «Արարատ» վեպերը։ 1952 թ. լույս տեսավ Հր. Քոչարի «Մեծ տան զավակներ» վեպի առաջին գիրքը, իսկ 1959 թ. վեպն ամբողջությամբ, երկու գրքով. հեղինակը հիմնովին վերամշակել էր վեպի յոթ տարի առաջ լույս տեսած առաջին մասը։ 1954—1958 թթ. լույս տեսան հայրենական պատերազմին նվիրված ևս մի քանի վեպ՝ Ար. Մելիքյանի «Հատուցում»-ը, Մ. Շաթիրյանի «Զինվորներ»-ը, Գ. Սեվունցի «Գերիներ»-ը, Մ. Ասլանյանի «Աներևույթ Հակատ»-ը, իսկ 1960 թ. Քր. Թափալցյանի «Պատերազմ» վեպի երրորդ հատորը և այլ վեպեր։ 1960—1963 թթ. սովետահայ արձակը հարստացավ հայրենական պատերազմին նվիրված ևս երկու վեպով՝ Բաղիշ Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան» և Մկրտիչ Սարգսյանի «Կյանքը կրակի տակ»։ Այսպիսով, 1945—1963 թթ., այսինքն 15—18 տարիների ընթացքում ստեղծվեց վեպերի մի ամբողջ շարք՝ Սովետական Միության հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի բազմակողմանի մասնակցության մասին։

Պատերազմի մասսայական բնույթը, իրադարձությունների մեծությունը թելադրեցին վեպի այն տեսակը, որ գրական քննադատության մեջ որակվեց իբրև «բազմապլան», «բազմահերոս» վեպ և որը տիրապետող էր նշված ժամանակաշրջանի սկզբում, իսկ վերջին տարիներս, ընդհակառակը, արդեն բացառություն է։ Վերը թվարկված վեպերից շատերը բազմապլանային են, ընդգրկում են կյանքի տարբեր բնագավառներ՝ ռազմաճակատ և թիկունք, գյուղ և քաղաք, արվեստագետի աշխատասենյակ և գործարան։ Նրանց մեջ գործողություններին մասնակցում են բազմաթիվ հերոսներ, որոնցից շատերն ունեն իրենց առանձին սյուժետային գծերը, բնավորության զարգացման տարբեր եղանակները։

Պատերազմին նվիրված վեպերում հերոսների բնավորությունները մեծ մասամբ բացահայտվում են ոչ թե հատուկ պրոբլեմի կամ կոնֆլիկտի շուրջը առաջացած կապերի ու փոխհարաբերությունների, այլ պատերազմի հաջորդական փուլերի, էտապների ընթացքում նրանց ներքին զարգացման միջոցով։ Այդ պատճառով դրանք կարելի է անվանել «վեպ-խրոնիկաներ»։ Բայց միաժամանակ պետք է նշել, որ այս բնորոշումով չի կարելի կանխորոշել նրանց գեղարվեստական մակարդակը։ Թե՛ բազմապլանայնության և թե՛ վեպ-խրոնիկայի սկզբունքով կառուցված շատ վեպեր նշվել են որպես ժամանակակից սովետական վեպի հաջողություններ։ Նկատելի է նաև, որ բազմապլան վեպի համար պարտադիր չէ վեպ-խրոնիկայի սյուժեն, ինչպես որ վեպ-խրոնիկայի համար պարտադիր չէ բազմապլանայնությունը։

Կապ ունենալով իրականության առանձնահատկությունների հետ, վեպերի այս կառուցվածքը կյանքի կոչվեց նաև որոշ տրադիցիաների հիմքի վրա։ «Պատերազմ և խաղաղություն» հանճարեղ էպոպեան բազմապլան վեպ է։

Նույնը կարելի է ասել «Խաղաղ Դոն»-ի մասին։ Վեպ-խրոնիկան նույնպես որոշ տրադիցիաներ ունի, որոնք կապված են սոցիալիստական ռեալիզմի վեպի հետ։ Քննադատական ռեալիզմի վեպի համար բնորոշ չէր ժողովրդի մարդկանց մասսայական մուտքը երկի մեջ, նրանց գլխավոր հերոս լինելը կամ գործողությունների կենտրոնում գտնվելը։ Մինչդեռ սոցիալիստական ռեալիզմի վեպի հերոսները թե՛ շատ էին և թե՛ մարմնավորում էին կյանքի վերափոխման համար ակտիվ պայքարի ելած հասարակ ժողովրդի մարդկանց։ Բավական է հիշել սոցիալիստական ռեալիզմի առաջին նշանավոր վեպերը՝ Գորկու հանրահայտ «Մայրը» և Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղը»։ Երևալով նաև ընտանեկան, սիրային, ազգակցական և այլ հարաբերությունների ոլորտի մեջ, այդ վեպերի հերոսներն իրենց դրսևորում են հիմնականում սոցիալական ու հասարակական-քաղաքական կյանքի բարդ հարաբերությունների ասպարեզում։ Դրա հետևանքով հաճախ սյուժեի դեր են կատարում մեծ դեպքերը՝ ժամանակագրական կարգով, և ստացվում է վեպ-խրոնիկա։ Բնորոշ է, օրինակ, որ սովետահայ վեպերից այդ բնույթն ունեն հայ ժողովրդի ռևոլուցիոն զարթոնքն արտացոլող վեպերը։ Հայրենական պատերազմին նվիրված վեպերից վեպ-խրոնիկայի սյուժե ունեն Հր. Քոչարի «Մեծ տան զավակները», Ս. Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ», Բ. Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան», Մ. Սարգսյանի «Կյանքը կրակի տակ» և այլ վեպեր ու վիպակներ։

Սակայն, ինչպես հայտնի է, վճռողը գրողի տաղանդն է, մեծ թեման գեղարվեստորեն իմաստավորելու նրա փորձն ու վարպետությունը։ Կան դեպքեր, երբ վեպի բազմապլանայնությունը, ծավալը արդարացնում է հայրենական պատերազմի պատասխանատու թեման։ Վիպասանը կարողանում է դեպքերի հաջորդականությունն էլ օգտագործել՝ իրականությունը պատմական հավաստիությամբ արտացոլելու և լայն ընդգրկումների համար, կոնկրետ փաստը դարձնել գեղարվեստական ճշմարտություն և նրա մեջ հայտնաբերել պատերազմի գլխավոր հերոսի՝ շարքային մարտիկի ճշմարիտ գիմանկարը։ Սակայն կան և այնպիսի դեպքեր, երբ հեղինակին գրավողը դեպքերի արտաքին մեծությունն է, երբ նա չի կարողանում տարբերել էականը երկրորդականից և ստեղծում է նկարագրություններով առատ, շինծու կոնֆլիկտների վրա հարմարեցված վեպ։ Անցած տասնամյակի հատկապես առաջին տարիներին հրապարակ եկած բազմապլանային վեպերից շատերը տառապում էին նկարագրայնությամբ, լուսանկարչությամբ կամ, ինչպես ընդունված է ասել՝ հիվանդոտ գիրությամբ։

Քր. Թափալցյանի «Պատերազմ» վեպը բազմապլան և բազմահերոս վեպ է։ Մեծ ընդգրկումների փորձը այս դեպքում թեև պարզ արտացոլման իմաստով որոշ պատկերացում տալիս է ժամանակաշրջանի մեծ իրադարձությունների մասին, բայց չի ստեղծում գեղարվեստորեն իմաստավորված պատկերներ, հոգեպես հարուստ կերպարներ։ Հեղինակը մի շարք դեպքերում մնում է կոնկրետ մարդկանց, նրանց անձնական կապերի սահմաններում, որը երբեմն տանում է դեպի նատուրալիզմ և զրկում է նրան գեղարվեստական ընդհանրացումների հնարավորությունից։

Մ. Շաթիրյանի «Զինվորներ» վեպը ևս բազմապլան է։ Հեղինակն աշխատում է վիպական կապ ստեղծել ռազմաճակատի և թիկունքի միջև, պատկերել ոչ միայն պատերազմող զինվորներին, այլև հեռավոր թիկունքի, կոլտնտեսա-

ին գյուղի մարդկանց։ Վեպի այս երկու կողմերն իրար հետ կապող թելերը շատ թույլ են։ Մյուս կողմից գյուղի կյանքին հեղինակի թույլ ծանոթությունը միանգամայն աննպատակ է դարձնում վեպի այդ պլանը։ Բայց Շաթիրյանի վեպի ռազմաճակատային կյանքը պատկերող մասը շատ է շահում հեղինակի պատերազմական իրադրության լավատեղյակությունից։ Շաթիրյանը լավ ծանոթ է նաև իր ընտրած հերոսների՝ օդաչուի, հրետանավորի մասնագիտությանը, այդ պատճառով նրա ռազմիկները ճշմարտացի ու համակրելի են։

Հայրենական պատերազմին նվիրված մի քանի վեպերի համար ևս բնորոշ է ձգձգվածությունը, դեպքերի մեծության միայն արտաքին պատկերումը, նաև սխեմատիզմն ու հոետորականությունը։ Բայց դրանցից շատերն, այնուամենայնիվ, կարողացան գեղարվեստորեն բացահայտել պատերազմական իրականության մի քանի էական կողմեր, ստեղծել սովետական մարդու համայիչ կերպարներ։

Ամենից առաջ պետք է նշել, որ հայրենական պատերազմին նվիրված վեպերի գաղափարական պաթոսը ինտերնացիոնալիզմն է։ Գրողներին հաջողվել է պատկերել սովետական ժողովրդի և նրա բանակի ինտերնացիոնալ ոգին, ցույց տալ, որ նախ և առաջ դրա շնորհիվ նրանք հաղթանակ տարան թշնամու դեմ։ Հենց նույն Շաթիրյանի վեպում կան ազնիվ, պարզ բնավորություններ, որոնք մարմնավորում են անմիջականորեն ժողովուրդների բարեկամությունն ու մարդասիրությունը։ Առանց ճիգերի են պատկերված՝ օրինակ, ռուս գեներալ Հաստրերովի և շարքային օդաչու Ռուբեն Մարտիկյանի բարեկամությունը, լեյտենանտ Արամյանի և նրա կապավոր Սարլինի փոխադարձ համակրանքն ու նվիրվածությունը, նույն Արամյանի և մի սովորական ռուս աղջկա՝ Անյայի սերը և այլն։ Քր. Թափալցյանի «Պատերազմ» վեպում «Ինտերնացիոնալ դասակին», նրա զինվոր Վոլկովին նվիրված էջերը ամենահաջողված էջերից են։ Չնայած որոշ ձգձգվածությանը, Հմ. Սիրասի «Արարատ» վեպում պատկերված են հայ ժողովրդի դարերից եկող բարեկամական զգացմունքները դեպի ռուս և ուկրաինական ժողովուրդները, հեղինակն ստեղծել է ռուս զինվորականի հաջողված կերպար (Դենիսով)։ Գ. Սևունցի «Գերիներ» վեպում պատկերվում է տարբեր երկրների աշխատավոր մարդկանց հոգեհարազատությունն ու ինտերնացիոնալիզմը։ Հեղինակը միշտ չէ, որ կարողացել է խուսափել քիչ հետաքրքրություն ներկայացնող և գեղարվեստորեն լիովին չարդարացված դրվագներից, բայց ամբողջության մեջ նրան հաջողվել է ցույց տալ սովետական մարդկանց և արտասահմանի աշխատավորների փոխադարձ համակրանքն ու նրանց ատելությունը դեպի ֆաշիստական գավթիչները։ Գերի ընկած մարտիկներին տանելով երկրից-երկիր, հեղինակը նրանց հանդիպեցնում է անծանոթ, հեռավոր բարեկամների հետ, որոնց պատկերել է կենդանի ու շոշափելի գծերով։

Սովետական բանակի ինտերնացիոնալ ոգին ավելի մեծ մասշտաբներով ու խորությամբ արտացոլվեց Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպում։ Այս վեպը ևս գերծ չէ հայրենական պատերազմին նվիրված մյուս վեպերին բնորոշ մի քանի թերություններից. պատերազմական առօրյայի պատկերները որոշ դեպքերում ճնշում են վեպի դինամիկ զարգացման վրա, բոլոր հերոսները չեն, որ իրենց անհրաժեշտ դերն ունեն վեպի մեջ։ Բայց որպես պատերազմի մասին գրված վեպ, մարտական գործողությունների պատկերներն ի սպաս են դրված հատուկ նպատակի. դրանք դրսևորում են զորքի տարբեր

տրամագրությունները՝ պատերազմի տարբեր էտապներում, այդպիսով ստեղծելով ոչ թե մարտական գործողությունների պարզ նկարագիր, այլ պատերազմի՝ որպես դրամատիկական ու ողբերգական ելևէջներով դեպի հաղթանակ ընթանալու պատմություն։

Վեպի մի այլ բնորոշ հատկանիշն այն է, որ նրանում մի տեսակ սինթեզի են ենթարկված հեղինակի՝ որպես զինվորական թղթակցի, տեսածն ու ապրածը ռազմաճակատում։ Նրա ակնարկների շատ հերոսներ եկել ու վիպական հերոսների հետ միասին բնակություն են հաստատել «մեծ տանը»։ Վեպի հիմքում գրված է 76-րդ դիվիզիայի մարտական կյանքը. նա Հայաստանից մեկնել է ռազմաճակատ, նահանջելով հասել Վոլգոգրադ, մասնակցել Վոլգոգրադի պատմական մարտերին և այնուհետև հարձակողական մարտերով հասել մինչև Բելգորոդ և այստեղ էլ, արդեն որպես գվարդիական զորամաս, փառքով պսակել իրեն՝ ծավալուն հարձակողական գործողություններում։ Թե՛ դիվիզիան է իրական, և թե՛ նրա անցած ճանապարհն է պատմական իրողություն։ Այս տեսակետից Հր. Քոչարի վեպը, բազմապլան և բազմահերոս, նաև վեպ-խրոնիկա լինելով հանդերձ, սահմանակից է պատմավեպին։ Պատմավեպի սկզբունքով են նկարագրված նաև տեխնիկայի վիթխարի զանգվածները, զենքի տեսակների փոխգործողությունները պատերազմի տարբեր էտապներում, սովետական նոր տիպի զենքերի գործադրության ժամանակն ու վայրերը։

«Մեծ տան զավակները» վեպում ինտերնացիոնալիզմը մարմնավորված է կենդանի պատկերներով։ Հերոսները տարբեր ժողովուրդների զավակներ են։ Ընթերցողն ամեն բոպե հանդիպելով նրանցից մեկին կամ մյուսին, ծանոթանում է նրանց ազգային սովորություններին, տրադիցիաներին, երգերին և համակրանքով է լցվում ոչ միայն դեպի այդ հերոսը, այլև նրա ժողովուրդը։ Տարբեր ազգությունների մարդկանց միջև տիրում են այնպիսի ջերմ ու սրբոտագին հարաբերություններ, ինչպես համերաշխ մեծ ընտանիքի որդիների ու դուստրերի միջև։ «Մեծ տան զավակները» վերնագիրը շատ սազական է վեպին, ճիշտ արտահայտությունն է վեպի կենտրոնական գաղափարի և տրամաբանության։

Վեպում շատ են այն պատկերները, որոնք արտացոլում են սովետական զինվորների՝ մարտերում կոփված բարեկամությունը, հոգեկան մոտիկությունը։ Դրանց թվում առանձնապես հաջող են Աննիկ Զուլալյանի և Իրակլիի մարտադաշտում միաժամանակ վիրավորվելիս փոխադարձաբար իրար օգնելու, նույն Իրակլիի և Վանյա Կրասնովի թաղման պատկերները։ Վեպի հերոսների հարաբերությունները խարսխված են ազգային հավասարության զգացմունքի, փոխադարձաբար բոլոր ժողովուրդներին, նրանց անցյալը, կուլտուրան հարգելու զգացմունքի վրա։ Նրանց համար խորթ է ազգային առավելության, ազգային սնապարծության կամ նիհիլիզմի գաղափարը։

Քոչարի վեպում հաճախ է զգացվում հեղինակը, որ կանգնած է մարտիկի կամ հրամանատարի կողքին և սրա հետ խորհում է կամ զգում։ Բայց իր հերոսների մեջ հեղինակի այդ ձևով բեկվելը չի տանում դեպի մերկապարանոց գաղափարախոսություն, որովհետև Քոչարը ուրիշ ժողովուրդների պատմության ու տրադիցիաների մեջ թափանցելու յուրահատուկ ձիրք ունի։ Գրքում բերված երգերը, տարբեր ժողովուրդների բանահյուսության այլ նմուշները դրա ապացույց են, բայց ավելի հիանալի վկայությունը Օլես Բաբենկոյի կերպարն է և այդ հերոսին վերագրվող տարեգրությունը։ Առաջին բո-

պեներին ընթերցողը դժվարանում է հավատալ, որ այդ տարեգրությունը կազմել է մի հայ հեղինակ և ոչ թե ուկրաինացի մի մարդ, որը ռուս կամ ուկրաինացի հին տարեգիրների օրինակով կազմել է Վովչա քաղաքի պատմությունը։ Բարենկոյի տարեգրությունը թվում է ուկրաինական ժողովրդական բանահյուսության բարձրարվեստ ստեղծագործություն կամ տաղանդավոր տարեգրի աշխատանք, որը հիանալի գիտե իր քաղաքի պատմությունը, օժտված է իր ժողովրդի դարերի խորքից եկող ազատասիրությունն ու մշտավառ երազները արտահայտելու ձիրքով։ Ուրիշ ժողովուրդների պատմության, առհասարակ պատմության նկատմամբ տածած բուռն հետաքրքրությունն ու նրա մեջ թափանցելու կարողությունը արտահայտվել է Քոչարի նաև այլ երկերում և հրապարակախոսական ելույթներում, բայց այս վեպում այն դրսևորվել է առանձնահատուկ խորությամբ։

Սակայն կարևորն այն է, թե հայրենական պատերազմին նվիրված վեպերի հեղինակներին որչափով հաջողվեց ստեղծել սովետական մարդու, ժամանակակցի, մարտիկի և հրամանատարի կերպարը։ Պետք է ասել, որ շարքային զինվորների ճշմարտացի կերպարների ստեղծումը նշված վեպերի աչքի ընկնող առավելությունն է, և, վերջ ի վերջո, դրանով էլ պայմանավորված է նրանց գեղարվեստական-դաստիարակչական նշանակությունը։ Առաջին օրինակը տվեց Ս. Խանզադյանը «Մեր գնդի մարդիկ» վեպում։ Նրա շարքային զինվորները խիզախ, դիմացկուն, պարզ մարդիկ են, որ երկիրը թշնամիներից վերջնականապես մաքրելու, արևմտյան սահմաններին հասնելու մոմենտին լալիս են ուրախությունից և ուրիշ երկիր ոտք դնելուց առաջ հայրենի հող են լցնում ուսապարկերը։ Մ. Շաթիրյանի «Զինվորներ» վեպի հերոսների մեջ կան նաև հրամանատարներ միջին և բարձր կազմից, բայց վեպի ամենահաջողված կերպարը շարքային Սաբլինի կերպարն է։ Նրա միջոցով շատ բան է ասված սովետական շարքային զինվորի պրպտող, շաբլոնի դեմ ըմբոստացող ոգու, հաղթելու աննկուն կամքի մասին։ Կոլորիտային, իր լավատեսական հումորով ուշագրավ է Օնիկ Ճրագյանը Դ. Սևունցի «Գերիներ» վեպում։

Բայց շարքային մարտիկների կերպարներ ստեղծելու առումով առանձնապես աչքի ընկավ Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպը։ Հերոսներից մի քանիսի ստեղծման համար հեղինակը կիրառել է դասական վեպի տրադիցիան՝ մարդը բնավորության կազմավորման պրոցեսի, զարգացման մեջ։ Արգամ Վարդունին, Ուխարովը, Բենո Շառոյանը ամբողջական գեղարվեստական կերպարներ են նախ և առաջ այն պատճառով, որ պատրաստի բնավորություններ չեն, այլ պատերազմական կոնկրետ պայմաններում, տիպական միջավայրում համապատասխան զարգացում են ապրում։ Դրանք բնավորություններ են, որոնց զարգացման պատմությունը պատերազմի պատմությունն է։ Արգամ Վարդունին վեպի սկզբում պարծենկոտ, սին երազներով տարված երիտասարդ է, որ պատերազմ է գնում հեշտությամբ թշնամական գիներալներ գերելու, շքանշաններ ստանալու և փառք վաստակելու համար։ Բայց ահա հեղինակը պատկերում է Արգամին վիրավորներ տանող գնացքում։ Երիտասարդն առաջին անգամ լսում է մեռնողների հառաչանքը և ուշքի գալով հասկանում է, թե իրոք ինչ բան է պատերազմը։ Այնուհետև նա երևում է ընթերցողին առաջին մարտերի ժամանակ, երբ փախչում է խրամատից և ընկերների կշտամբանքներից ու սեփական թուլության գիտակցությունից «երեխայի պես հեկեկում է», «գլուխը դնելով խրամաթմբին»։ Զանազան այլ հանգամանքնե-

ում Արգամը դեռ դրսևորում է իր վերացական հասկացողությունների որոշ տարրեր, նա միանգամից չի փոխվում, այլ աստիճանաբար, պատերազմի բնորոշ պայմանների ազդեցության տակ։ Եվ երբ վեպի վերջում ընթերցողը կրկին հանդիպում է Արգամին՝ ազատագրված այդ թուլություններից, դարձած լայնահայաց ու կենսասեր երիտասարդ, հավատում է նրա մեջ կատարված փոփոխությանը։ Հմայիչ գծերով են օժտված նաև վեպի մյուս զինվորները. Միխայիլ Վեսյոլին՝ նահանջի նկատմամբ իր անկեղծ դժգոհությամբ, «ուխաբովշչինայի» հանդեպ տածած բուռն ատելությամբ, Կարոն՝ իր հաստատուն բնավորությամբ, համեստությամբ և ներքին կորովով, Աննիկն՝ իր հետևողական սիրով, Մարիա Վովկն՝ իր շարժուն, բոլորին վշտակցելու և բոլորի հետ ուրախությունը կիսելու բնավորությամբ, Ֆերանյանը՝ «հայ անունը անպատիվ չանելու» սրտառուչ և հարազատ սկզբունքով, — ամեն մեկը մի ինքնատիպ մարդկային գեղեցկություն է, սովետական մարդու լավագույն հատկություններ ունեցող հերոս։

Իգոր Սլավինի և Արսեն Տոնոյանի մեջ չի կարելի չտեսնել հեղինակի անկեղծ պոետական հիացմունքը սովետական մարդու բյուրեղյա ազնվության, հումանիզմի ու լավատեսության նկատմամբ։ Իգոր Սլավինի, այդ «մի քիչ կոմիկ», հումորի զգացումով հարուստ երիտասարդի երազները տիեզերքի խորքը թափանցելու, նրան տիրելու մասին առաջավոր մարդկության երազներն են, որ արդեն իրականություն են դառնում սովետական գիտնականների և ինժեներների ստեղծագործ աշխատանքով։ Իգորի հետաքրքրություններն անսահման են, մարդու կարողությունների մասին նրա հավատը՝ անխախտ. «Որդերն իրենց փոսերից դենը չեն տեսնում, իսկ մարդն ամբողջ աշխարհն ու տիեզերքն է տեսնում։ Ես շատ անգամ եմ Մարսի վրա էքսկուրսիա գնացել իսկ գիտե՞ս ինչքա՞ն հեռու է Մարսը մեզնից»։

Տոնոյանի կերպարն ստեղծելիս հեղինակը նկատի է ունեցել նրա սոցիալական էությունը։ Տոնոյանը կոլտնտեսական է, գյուղացու որդի, միշտ հողի հետ գործ ունեցած, հողից բարիքներ ստացող մարդ։ Ռմբակոծությունից պատառոտված հողից մի բուռ վերցնելով և շնչելով նրա «բուրմունքը», Տոնոյանը բացականչում է. «Մե՞ղք է հողը»։ Այդ խոսքերի մեջ մի ամբողջ կենսափիլիսոփայություն, ազնիվ աշխատավոր մարդու մի ամբողջ աշխարհ կա։

Պատերազմի թեմայով գրված գրեթե բոլոր վեպերում հեղինակների ուշադրությունից չեն վրիպել Մորթապաշտն ու կարյերիստը, վախկոտն ու հոռետեսը, որոնք բնականորեն կոնֆլիկտի մեջ են շրջապատի հետ։ Այդ տեսակետից համեմատաբար ամբողջական են և ցայտուն «Զինվորներ» վեպից Շուրպիխինի և «Մեծ տան զավակները» վեպից՝ Ուխաբովի կերպարները։ Այս երկու հերոսները, լինելով տարբեր բնավորության տեր մարդիկ, — մեկը վախկոտ ու մորթապաշտ, մյուսը՝ քաջ և ճարտարախոս, — նույն փիլիսոփայությանն են հետևում՝ անհատապաշտ են։ Ավելի հետաքրքիր է և խորը Ուխաբովի կերպարը։ Անհատապաշտության և մարդատյացության սոցիալական հիմքերը մեղանում ոչնչացվել են, բայց գաղափարի մնացորդները դեռ ապրում են առանձին մարդկանց գիտակցության մեջ։ Պատերազմը որոշ հող ստեղծեց այդ մնացորդների աշխուժացման համար։ Ինդիվիդուալիստն այնպես է ցույց տալիս, թե ամենից ավելի է ատում թշնամուն և պատրաստ է քաջաբար տրորել նրան։ Դրա դիմաց նա պետք է մեծարվի թե՛ ռազմաճակատում և թե՛ վերադառնալուց հետո։ Նա պետք է հատուկ դիրք գրավի մեր հասարակության-

մեջ, իրավունք ունենա լինել զեկավարների, «պետերի» և ոչ թե «ենթականե-յի» մեջ. «Ես խառնվածքով անկախություն, ինքնուրույնություն սիրող մարդ եմ, ուրիշի կամքը լուծ է իմ ուսերին։ Նույնիսկ անասունները հաճույքով չէ, որ իրենց վիզը լծի տակ են դնում։ Եթե ուրիշները մեծ մարդիկ են, պետերի իրավունքներ ունեն իրենց նման հարյուրավոր, հազարավոր ուրիշ մարդ-կանց վրա, ինչո՞ւ ես չեմ կարող մեկը լինել այդ քչերից, ինչո՞ւ պիտի ես ենթարկվող զանգվածների մեջ լինեմ...»։ Այսպես է դատում Ուխարովը։ Մարդու հոգեբանությունը կապելով գլխավորապես բիոլոգիական հակումների հետ, նա պատերազմի ծանր պայմաններում գնում է ոչ թե դեպի մարդասի-րություն, այլ մարդատյացություն։ Բնական է, որ «ուխարովշչինան» զորա-մասում դառնում է ատելության ու արգահատանքի առարկա։ Ճիշտ է լուծ-ված Ուխարովի ճակատագրի հարցը։ «Մեծն Պավել Սավելյևիչը» գլորվում է մինչև հանցագործություն, և զինվորական տրիբունալը դրա համար նրան մահվան է դատապարտում։ Բնական է նաև, որ Ուխարովը դատավարության ժամանակ ֆատալիստ է դառնում. «Ճակատագիր է, գուցե այսպես պիտի լի-ներ»։

Պատերազմին նվիրված մեր վեպերում գործում են ոչ միայն շարքային մարտիկներ, կրտսեր հրամանատարներ, այլև գնդապետներ, գեներալներ։ Այդ հրամանատարները խորիմաստ մտքեր են արտահայտում, նրանց ասած-ներից շատերը կարող են թևավոր խոսքեր դառնալ։ Բայց այդ բոլորը նրանք ասում են զրույցների, խորհրդակցությունների, առօրյա խոսակցությունների ժամանակ, ինչպես ակնարկի մեջ։ Նրանք կոմունիստներ են և հեղինակները, բնականաբար, նրանց մեջ աշխարհայացքի տարբերություններ չեն նշում։ Բայց աշխարհայացքի նույնությունը բնավորությունների համահարթեցում, կյանքի հակասությունների ընկալման ու մեկնաբանման միօրինակություն չի նախորոշում։ Մինչդեռ մեր վեպերի շատ հերոսների մեջ նկատվում է այդ միօրինակությունը։ Երբեմն հրամանատարները ունեն որևէ լավ գիծ, որ հիշ-վում է, կամ անցել են կյանքի տարբեր ուղի, բայց նրանց բնավորություննե-րը չեն զարգանում, նրանց մեջ կարծես նախօրոք ամեն ինչ չափված-ձևված ու հաստատված է։ Մակերեսային, շաբլոն ու թուղթիկ են մանավանդ հրամա-նատարների դատողությունները պատերազմի պատճառների և առաջին ամիս-ների անհաջողությունների ու հակասությունների մասին։

Այս թերությունն ընդհանուր բնույթ ունի, և դա պատահական երևույթ չէ։ Դրա պատճառները կապված չեն միայն հեղինակների, նրանց շնորհքի առանձնահատկությունների հետ, այլ բխում են գաղափարական կյանքում թույլ տրված սխալներից, մասնավորապես անհատի պաշտամունքի հետևան-քով ստեղծված առանձնահատուկ դժվարություններից։

Ռուս գրականության մեջ վերջին տարիներս հրապարակ եկան վեպեր, որոնց մեջ համարձակությամբ ու ճշմարտացիությամբ պատկերվում է պա-տերազմական իրականությունն իր հակասություններով։

Պատերազմին նվիրված սովետահայ արձակի, նախ և առաջ վեպերի մեջ չի նկատվում այդ համարձակությունը։ Նրանց մեջ գրեթե չի խոսվում սովե-տական հրամանատարների ծանր մտքերի մասին, չեն բացահայտվում նրանց սխալները, որոնք այսպես թե այնպես եղել են և չէին կարող չլինել անհատի պաշտամունքի հետևանքով։ Որոշ գրողներ կաշկանդում են իրենց այն մտայ-նությամբ, թե այդ բնույթի դատողությունները իրենց հերոսներին կարող են

դարձնել վախկոտ, կասկածամիտ, քաղքենի։ Քր. Թափալչյանի «Պատերազմ» վեպում կա այսպիսի մի քանի տող. քաղդեկ Սանասարյանը դասակի հրամանատար Արամի «հուզված պահին» սկսում է նրան բացատրել մեր բանակի նահանջի պատճառները։ Հեղինակը, որ սովորաբար շարադրում է Սանասարյանի երկար ճառերը, այստեղ այդպես չի վարվում, այլ բավարարվում է իր կողմից ընդգծելով, թե՝ «նա բացատրում էր մեր բանակի ժամանակավոր նահանջի պատճառներն այնքան պարզ, այնքան լավ, որ Արամին թվում էին այդ բոլորը նորություն են»։ Ընթերցողն ավելի Ալեքսանդր Բեկի հերոս գեներալ Պանֆիլովին է հավատում, որն սկզբում խոստովանում է Մոմիշ-Ուլուն, թե չգիտե նահանջի պատճառները, և ապա ավելացնում, որ գիտե մասամբ միայն, այն է՝ «արհամարհեցինք ռեալությունը», քան թե Սանասարյանին։

Բայց չի կարելի մոռանալ, որ Թափալչյանի վեպի երկրորդ հատորը լույս տեսավ 1949 թ., ՍՄԿՊ XX համագումարից շատ առաջ։ Այն ժամանակ շատերն էին ստիպված որոշ սխեմայով «լավ» ու «պարզ» բացատրել «մեր ժամանակավոր նահանջի» պատճառները։

Հր. Քոչարի վեպում ավագ գումարտակային կոմիսար Ֆեդոսովը երկար բացատրում է Արշակյանին մարտերի ընթացքը և ավելացնում, թե «լավ նահանջը հաղթանակի ձևերից մեկն է, ամեն նահանջ պարտություն չէ», կամ՝ «լավ նահանջը հաղթանակ է» և այլն։ Այս խոսքերի վրա Արշակյանը «սրտի խոր ցավով» մտածում է. «Չլինեին մեր ձախորդությունները, սա չէր ասի, թե լավ նահանջը հաղթանակ է։ Կարծես թե մենք նահանջում ենք ոչ թե հակառակորդի ռազմական ուժի ճնշման տակ, այլ հատուկ ինչ-որ նպատակով թողնում ենք մեր մարզերն ու ժողովուրդը... Եվ լուրջ դեմք ընդունած, նա ինչ-որ տեսություն է կառուցում արդարացնելու այդ բոլորը։ Նա պարզապես մխիթարում է իրեն ու ինձ... Ուրիշ ի՞նչ կարող է ասել։ Վաղը ես էլ այդպես պիտի խոսեմ զինվորների մոտ»։ Իր այս մտքերով Արշակյանն զգաստ ու անձնվեռ հայրենասեր է, նա գեթ ինքն իրեն խաբելու ցանկություն չունի։ Արշակյանի այս ներքին մենախոսությունը հույս է ներշնչում, թե հեղինակը մտադիր չէ սահմանափակվել տրադիցիոն դարձած բացատրություններով։ Դժբախտաբար, վեպի զարգացման ընթացքում դա տեղի չի ունենում, որովհետև հեղինակն իրեն կաշկանդված է զգում։ Նույն Արշակյանը, որ այնպես զգաստ էր դատում նահանջի վերաբերյալ, բարձր հրամանատարությանը զեկուցում է Գալունովի մասին և նրան հանում են հրամանատարական բարձր պաշտոնից։ Իսկ Լուգանսկոյը, լսելով Գալունովի՝ գնդակների տակ մարտադաշտով գնալու և «ո՞ւր են ձեր տանկերը» արտահայտության մասին, բնութագրում է նրան այսպիսի խոսքերով. «Թանձր է մշուշը նրա հոգու վրա, և այդ մշուշի միջից ոչինչ տեսնելու ընդունակ չեն լինի նրա նմանները»։ Բայց ընթերցողը այստեղ էլ դժվարանում է հավատալ գեներալին, որովհետև Գալունովը ճշմարտություն է ասում տանկերի և ավիացիայի պակասության մասին, ինչպես նաև իրավացի է մեղադրում դրա համար «քաղաքագետներին»։ Կոմունիստի կոչման մասին հանրահայտ ճշմարտություններ ասելով, գեներալ Լուգանսկոյը շրջանցում է տանկերի և ավիացիայի պակասի, նահանջի, թշնամու կողմից «Ռուսիայի կեսը» գրավելու հարցերը, դրանով ցույց տալով, որ հենց ինքն է, որ «մշուշի միջից» է նայում իրականությանը։ Որքան էլ որ հեղինակն աշխատել է դրական հատկություններով օժտել Լուգանսկոյին, այդ կերպարը մնացել է սխեմաներով մտածող այն զեկավարի կերպարը, որը կարծում էր,

թե ամեն ինչ կանխորոշված է երկրի ամբողջ ղեկը իր ձեռքն առած ղեկավարի հանճարով և ժողովրդի վիթխարի մարդկային ու նյութական կորուստները նախատեսված էին որպես հաղթանակի առաջին փուլ, իսկ այլ կերպ մտածող մարդիկ «կողմնակի», «հեռանկարը կորցրած» մարդիկ էին։

«Զինվորներ», «Գերիներ» վեպերում ևս հերոսները արհեստականորեն շրջանցում են այս հարցերը։ Տանկերի, ինքնաթիռների պակասության մասին հիշելով, Շաթիրյանի հրամանատարները կա՛մ «հոգոց» են արձակում, կա՛մ «մտահոգված» երկնքին են նայում։ Հեղինակը ընթերցողի առաջ չի բացում նրանց մտաշխարհը, ցույց չի տալիս, թե նրանցից ո՞րը ինչպես էր ըմբռնում երկրի անսահման հնարավորությունների և իրականում ստեղծված դրության միջև եղած հակասությունները։

Իրավացի էր ռուս նշանավոր բանաստեղծ Ալեքսանդր Տվարդովսկին, երբ պարտիայի XXII համագումարում ասաց. «Սակայն վերջին տարիների մեր գրականությունը, ...իմ կարծիքով, դեռևս չի կարողացել լիովին օգտվել այն նպաստավոր պայմաններից, որը նրա համար ստեղծել է պարտիայի XX համագումարը։

Գրականությունը ոչ միշտ և ոչ ամեն բանում է հետևել այն համարձակության, ուղղամտության և ճշմարտության օրինակին, որ նրան ցույց է տալիս պարտիան։

Ինչումն է մեր գրականության էական պակասությունը, որն առանձին պարզությամբ այժմ երևում է մեր XXII համագումարի բովանդակությունն ու պաթոսը կազմող լույսի տակ։ Այդ պակասությունը կիսատ-պռատ ասելն է, կյանքի բազմակողմանի երևույթների, նրա բոլոր կողմերի և նրա առաջադրած խնդիրների ոչ-լրիվ արտացոլումը, եթե ասենք առանց երկդիմի խոսքի՝ կյանքի խորության և ճշմարտության պակասությունն է»[1]։

Վերջին տարիներին երևան եկան հայրենական պատերազմի թեմայով նոր վեպեր, որոնց մեջ հեղինակները չեն ձգտում դեպքերի և ժամանակների մեծ ընդգրկման, այլ աշխատում են կենտրոնանալ հերոսների հոգեկան կյանքի վրա։ Դա հնարավորություն է տալիս փոքր ծավալի երկով հասնել հեղինակային մտահղացումների դիպուկ և հակիրճ գեղարվեստական մարմնավորման։

Բ. Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան» վեպի հերոսը՝ սովետական բանակի երիտասարդ կրտսեր հրամանատար Արտո Սասունյանը, որին վիճակվում է ռազմաճակատ մեկնել պատերազմի առաջին օրերին և ականատես լինել ու ապրել բանակի առաջին ամիսների անհաջողություններն ու դառնությունները, չի ձգտում հիմնավորել ու արդարացնել այդ անհաջողությունները, նահանջը, նա էլ Քոչարի վեպի Միխայիլ Վեսյոլիի նման քաղաքացիական իրավունքի գիտակցությամբ պատասխան է պահանջում այն հարցին, թե մեզ ասել են, որ մեր երկիրը ամենից հզորն է, ամենից լավ զինվածը, ուրեմն ինչո՞ւ են մեր երկինքը սևացնում թշնամու ինքնաթիռները, իսկ մեր ինքնաթիռներն այնքա՞ն քիչ են և այնքա՞ն դանդաղաշարժ։ Հերոսի յուրահատուկ կրքոտությունն ու անկեղծ զայրույթը պատերազմին անհրաժեշտ պատասխանատվությամբ ու գործիմացությամբ չվերաբերվելու համար, քաղաքացիա-

1 Ա. Տվարդովսկի, Ճաշ պարտիայի XXII համագումարում, «Գրական թերթ», 1961, № 45։

կան պաթոս է հաղորդում վեպին։ Դրա հետ միասին ս·վելի ցայտուն են դրսևորվում սովետական երիտասարդի լավագույն գծերը։ Ըմբռնելով կամ կռահելով, որ բանակի նահանջը «ստրատեգիական քայլ» կամ «հաղթանակի անհրաժեշտ պայման» չէ, Հովսեփյանի հերոսը չի կորցնում հաղթանակի հեռանկարը և միշտ հաստատ է մնում իր զինվորական պարտքի գիտակցությանը։ Նրա մեջ միշտ առանձին ուժով, ազգային բնավորության երանգներով դրսևորվում է ատելությունը գեպի թշնամին, ինչպես նաև անհանդուրժողական վերաբերմունքը գեպի յուրայինները, որոնք զերծ չեն արատներից և վատ են պատերազմում։ Բայց Արտո Սասունյանը, ինչպես և Կոնկինն ու Կամալովը միաժամանակ հումանիստներ են, ինտերնացիոնալիստներ։ Նրանք սպանում են անկախ իրենց կամքից, թշնամու թելադրած պատերազմի հետևանքով, հանուն իրենց ժողովրդի ազատության։ Նրանց մեջ ամենաուժեղ գծերից մեկը քաղաքացիական պատասխանատվության, ժողովրդի հանդեպ պարտքի զգացումն է, որը միանգամայն ներդաշնակ է մարդասիրության հետ։

Մ. Սարգսյանը «Կյանքը կրակի տակ» վեպում իր հերոսի բերանով լավ է արտահայտել սովետական զինվորի բնավորության այդ գիծը. «Այո, այստեղ թշնամիները սպանում են իրար, սպանում եմ ես էլ, սակայն մարդասպանությունն իմ արհեստը չէ։ Ինձ սպանության չի մղում նաև ինքնապաշտպանության բնազդը, ոչ։ Ամենազգայուն և մեծ զգացմունքը՝ հայրենասիրությունն այստեղ միանում է պարտականության անողոքության հետ և բարձրացնում է ձեռքդ թշնամու վրա»։

«Կյանքը կրակի տակ» վեպում պատերազմական իրականությունն իր բարդությամբ ու հակասություններով երևում է բանաստեղծական պրիզմայի միջով, որն ազդում է անմիջականորեն, հուզում է ու վեհացնում։ Այս ստեղծագործության հերոսը լայնասիրտ է, բարի, մարդասեր, նա կարծես կրում է ամբողջ ժողովրդի ուրախությունն ու վիշտը, սիրում է, ատում և ներում նրա մեծ սրտով։ Պատերազմի ողբերգական դրվագների նկարագրության ժամանակ էլ հեղինակին չի լքում նուրբ լավատեսությունը, յուրահատուկ հումորը, որը միախառնված է կյանքի և բնության ներդաշնակության խոր զգացողությանն ու մի փոքր թախծալի քնարականությանը։ Մ. Սարգսյանի հերոսն իր օրագիրը կազմել է այնպես, որ նրանում տեղ գտնեն ամենախտացված, ամենակարևոր ճշմարտությունները պատերազմի մասին։ Դեպքերին տրված գնահատականները, պատմողի կողմից դրանց ըմբռնումն ու գնահատականը անմիջական են, խորն ու անկեղծ։ Դրանք հեռու են հռետորականության տարրերից։ Հեղինակն իր ամեն մի խոսքը քաղում է սրտից, արյունով ու արցունքով է գրում ամեն մի տողը։

Հայրենական պատերազմին նվիրված վեպերը, իրենց թերություններով հանդերձ, կարևոր ավանդ հանդիսացան սովետահայ գրականության մեջ։ Նրանց ամենամեծ արժանիքն այն է, որ պատկերեցին շարքային մարդուն, զինվորին, ցույց տվին նրա հոգեկան գեղեցկությունները։ Այդ վեպերում գեղարվեստորեն իմաստավորվեց սովետական մարդու հայրենասիրությունը, որպես սոցիալական ու ազգային հավասարության, ինտերնացիոնալիզմի խտացված արտահայտություն։ Հայ ռազմիկների հաջողված կերպարների միջոցով այդ վեպերը պատկերեցին պատմական ճշմարտությունը հայ ժողովրդի կորովի, անձնուրաց մասնակցության մասին Սովետական Միության հայրենական մեծ պատերազմին։

Հայրենական պատերազմին նվիրված վերջին տարիների վեպերը հաղթահարեցին հետպատերազմյան շրջանի առաջին տարիներին նկատվող նկարագրայնությունն ու նատուրալիզմի տարրերը, ինչպես նաև անհատի պաշտամունքի տարիներից մնացած սխեմատիզմն ու կաշկանդվածությունը, կարողացան կանգնել պարզ ու հստակ, խորաթափանց և պատկերավոր արվեստի ճանապարհի վրա։

ОТРАЖЕНИЕ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ В АРМЯНСКОМ СОВЕТСКОМ РОМАНЕ

З. О. ГУКАСЯН

(Резюме)

Отечественная война явилась одной из главных тем послевоенного армянского советского романа. В начале этого периода были созданы большей частью объемистые, многоплановые романы. Некоторые из них схематичны, описательны и страдают риторичностью. Но были также романы, которые сумели художественно воплотить в себе идею морально-политического единства социалистических наций, показать, что в первую очередь благодаря этому единству Советская Армия одержала победу над фашистской Германией.

Основная ценность и художественно-воспитательное значение этих романов — создание образа советского воина, главного героя войны, раскрытие его духовной красоты. В романах удалось показать самоотверженную борьбу сынов мужественного армянского народа вместе с сынами других народов Советского Союза, вскрыть интернациональную сущность идеалов этого народа.

Некоторая скованность в литературе в период культа личности помешала романистам глубже изобразить сложное, полное драматизма военное время. Однако романы, появившиеся в 1961—1963 гг., уже преодолевают эту скованность и недосказанность, а также описательный стиль и схематизм. Все более становится явственной тяга к глубокому и проникнутому жизнью, сжатому и выразительному роману.